

ՍԵՐ ԵՎԱԿԱՑԻՑ ԵՎԱԿԱՑ

7



ՍԵՆԵԳԵՐԻՄ ԹԱԴԱԼՈՐԻ ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄՀ

Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի բակում կը գտնուի հասարակ եւ անտաշ քարէ արձանագրութիւն մը, անցման գրով եւ տառասխալներով, ինչպէս կը տեսնուի վերի պատկերին մէջ։ Քարը բերուած է Խզդիրէ գէպի Երասխ երկու ժամ հեռի Բլուր գիւղից, որի առջեւէն կանցնի փոքրիկ առու մը, սկիզբն առնելով Ղարա-ղալայից։

Արձանագրութիւնը գրուած է այս ձեւով .

ԿԱՄԵՂԵՎՀԱՅՈՂՐԻ	
ՊԱՌՈՒԱ ՎԱՍ	
ՄԵՂԱԾ	ՀԱՆԵ
ԺԱՆՈՒՆ	
Ա,	Լ
ՆԻԱ	
ԹՎԻՒ	
<hr/>	
Ի ԹԱԳԱՎՈՐՈՒ	
ԹԵԱՆՍԻՆԱՔ	
ԵՐԵՄԱ ԵՍԴՈՐ	
Ք ԿԱԿՆԵցիԱՀ	

Այսինքն է — «Կամ եղեւ Հացո (կամ հայո եւ կամ հոյո) ջրի զառուս վաս(ն) մեղաց հանել յանուն Աստուծոյ Նիւն (= 992) թվին — ի թագավորութեան Սինաքերեմա եւ Գորգ կա(ն)կնեցի(ի) խաչ» :

Եայտնի է թէ արձանագրութեանս մէջ յիշուած Սենեքերիմ թագաւորն Աղուանից Սեւադա թագաւորի որդի Սենեքերիմը չէ, այլ Արուսահել-Համադապի որդի Սենեքերիմ Արծրունին է, Սենեքերիմ-Յովհաննէս եւս կոչուած, ճիշտ ինչպէս կը կոչուէր նաեւ Աղուանից Սենեքերիմը : Այս վերջինս իր տաղանդովը վերականգնեց Աղուանից թագաւորութիւնը եւ քանի մը տարի յետոյ մեռաւ (1084 թ.) : իսկ առաջինը — Սենեքերիմ Արծրունին — թէեւ բազմաթիւ շինութիւններով օժանեց Վասպուրականը, բայց վերջապէս ազգին շահերը ոտքին տակ առած՝ իր եւ իր մօտաւոր մարդոց հանգիստը փնտոելու համար 1021 (=նշ) թուին «դէմ եղեալ գնացին յաշխարհն Յունաց ժԴՌ արամքք . թող զկանայս եւ զմանկտիս», ինչպէս կը վկայէ Արծրունեաց պատմիչը թովմա, երես 308, տպ. Պատկ. :

Սենեքերիմ Արծրունու ծննդեան թուականը յայտնի չէ, բայց մեր պատմութեան մէջ կը յիշատակուի 990 թուականէն սկսեալ . իսկ վախճանն է 1027 թուին, Ուրեմն տարակոյս չկայ թէ արձանագրութեանս մէջ յիշուած «Սինաքերեմ»ը՝ այս վերջինս է :

Կարեւոր է նաեւ այն պարագան որ Արծրունեաց իշխանութեան սահմանն աւելի կընդարձակուի այս արձանագրութեամբ, տարածուելով մինչեւ Էջմիածնի մօտերը :



ՀԱՅ ԽՈՂՔԱՐԴԻ ՄԵ ՊԱՏՈՒՄՐԱՎԱՀ



Դիմացի երկաթագիր արձանագրութիւնն ալ կը գտնուի Դէռքեան ձեմարանի բակում, եւ դուրս բերուած է Սուրմալի վիճակի Խալֆալու գիւղի «Վանքատեղ» կոչուած աւերակներից :

Վանքատեղ՝ հին մենաստան մը եղած է, ինչպէս ցոյց կուտան առունն եւ հոն գտնուած փոքրիկ եկեղեցւոյ մը աւերակն որ այժմ ։ Յովհաննէս կը կոչուի եւ ուխտատեղի գարձած է մօտակայ բնակչաց :

Արձանագրութիւնս թերի եւ սխալներով հրատարակուած է և Ալիշանի «Այրարատ»ում, երես 125 ա, սրբազն Արքատ. արքեպ. Սեղրակեանցի օրինակութեան վրայէն : Բնագիրը — ինչպէս ցոյց կուտայ պատկերը — 7 տողի վրայ գրուած է թէեւ, բայց ես կանոնաւոր տողերու կը վերածեմ հոս եւ կը բաղդատեմ և Ալիշանի հրատարակութեան հետ :

Իմ .

Ալիշ.

ԹՎ

ԼԱ

Ծնորհիւն Աստուծոյ

Ես Վահրամ կոկալի

Որ եւ զիսաչս կանկնեցի

Առ Քրիստոս բարէխաւսի

Ծնորհկան եւ Թամամի

Տղայ եղեալք յայսմ աշխարհի

Կոկիծ թողին անմոռնալի

Հաւրն եւ մաւրն Սեւաստի

Ով կարդացողք այսմ գրի

Զմեզ յիշեցէք Տէրն ողորմի

Յահեղ աւուր դատաստանի

Թվ . . . ԼԱ. Ծնորհիւն Աստուծոյ .

Ես Վահրամ կոկալի

Որ եւ զիսաչս կանգնեցի

Նինորկանն եւ Թամամի

Տղայ եղեալք յայսմ աշխարհի .

Կոկիծ թողին անմոռնալի

Հաւրն եւ մաւրն Սեւաստի .

Ով կարդացողք այսմ գրի

Զմեզ յիշեցէք . Տէրն ողորմի

Յահեղ աւուր դատաստանի :

Եթէ իրօք ԼԱ. (=582) պէտք է կարգալ թուականը, այն ատեն կարեւոր հնութեան մը առջեւ կը գանուինք . բայց այս երկու տառերը պարփակող շրջանակէն գուրս՝ քիչ մը վերեւ՝ կը տեսնուի փոքրիկ «Զ» մը եւս . ուստի հարկ կը լինի կարգալ՝ «Թվին ԶԼԱ», այսինքն 1282 թ. ։

ԳՈՆԴԱԿԱ ԱՊԱՀԱՐՁԱՆԻ

Ե

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՌՄԴԲ

Ի Տէր Յովհաննէս Կիթիկոսէ
 բազմաւ օրհնուք եւ մնծաւ
 սիրով սրյ Աթոյս զօրացու
 ցիչ շնորհիւն ծանիր սիրեցեալ
 որդի պրն Արքահամ քօխայ (1)
 զի ահա զգիրդ եկաւ ի վր. սար
 գիս վրդպատն այն կին արծակօղ
 անիրաւ մարդկանցն կողմէն
 հիմա մեք գրեցինք պետոս
 վրդպատին որ կամ տանել տա(2)
 իւրեան վանքն կամ ինքն կայ
 էստեղ քեզ մօտ նոցա բան չի
 նի որ զաւակ ունէն ամենեւին
 նց արձակումն չկա հալպաթ
 դու այլ մուղայէթ (2) լինիս
 ապրի իմ որդին այն շուն շան որ
 դոցն կանայքն պահիլ պիտէն
 թէ որ չի եաշէն . յլես գան
 էստեղ հալպաթ . լեր ողջ .

Այս իմաստ հետաքրքրական կոնդակը — որ թերեւս եզականն է իր
 տեսակին մէջ — կը գտնուի էջմիածնի միաբան հ . ևաչիկ ծ. գ . Դատեանի
 ժողովածուին մէջ, թ . Գ, համար 19 : Թղթին մնծութիւնն է 16, 5 × 9
 հարիւրորդամետր : Կոնդակագիր կաթողիկոսն է՝ Աղուանից երկրի Յովհաննէս կաթողիկոսը, որի կնիքէն կերեւի թէ 1763ին (=ՌՄԴԲ) բազմած
 է կաթողիկոսական աթոռին վրայ :

Կ . Յ . ԲԱՍՄՄԱԶԵԱՆ

(1) Տանուաէր : — (2) Ռւշագիր :